Մուցք

Բնակչություն՝ 376

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 130 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 26 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1870 մ,
կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային,

Գյուղը հիմնադրել են 1828 թվականին Պարսկաստանի խոյի Ղնիս գյուղից գաղթածները: Սկզբնական շրջանում կոչվում էր Մազրա: 1946թ. գյուղը վերանվանվել է Բարձրավան,իսկ 1990 թ.՝ Մուծք: Ըստ որոշ սկզբնաղբյուրների Մազրան հիմնադրվել է պատմական Մուծքի վայրում:
Մուծք գյուղանունը կրում էր խեթական Մեցուլա աստծո անունը՝ հայերեն հոգնակի բառակազմությամբ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 80 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 440 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 1170 գլուխ,
- խոզեր՝ 120 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 158:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 100 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 4638 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4493 հա, որից՝
- վարելահող՝ 848 հա, խոտհարք՝ 271 հա, արոտ՝ 2571 հա, այլ հողատեսք՝803 հա
- բնակավայրերի հողեր՝ 67 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 2 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 1 հա,
- անտառային հողեր՝ 69 հա, որից անտառածածկ՝ 66 հա
- ջրային հողեր՝ 5 հա